



ՀՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ասարտական քննություններու եւ աշխատանքներու, ինչպէս նաեւ Մագիստրոսի հետազոտական աշխատանքի պաշտպանութեան կարգը

ՑԱՆԿ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ.....2

 Ծրագիրներ2

 Վկայական Եւ Վկայագիր.....2

 Վկայական.....2

 Վկայագիր.....2

 Մագիստրոսի աստիճան2

 Ընդունելություն.....2

 Ընթացիկ Գրաւոր Աշխատանք Եւ Հետազոտութեան Պահանջներ.....3

 Վարկանիշներ/ Ուսումնական Ծրագիր Ըստ Մասնագիտացման3

 Հայոց Լեզու Եւ Պատմություն.....3

 Մագիստրոս: Խորհրդատուություն4

 Մագիստրոսական աստենախօսություն4

 Մագիստրոսական ծարագիրին դիմողներուն համար նախատեսուած կրթաթոշակ4

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ5

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ5

 Խաբէություն.....6

 Գրագողություն.....6

ՈՒՇ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑՔԷՆ ՀՐԱԺԱՐՈՒԵԼՈՒ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԸՆԴՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....7

 Ուշ Արձանագրություն.....7

 Դասընթացքէն Հրաժարուիլ.....7

 Մասնակցությունը Ընդհատել7

 Ուսման Վճարի Փոխատուցում.....7

 Ուսանողի Կարգավիճակի Փոփոխություն.....8

 Հեռացման Պատճառները.....8

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԻՏՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....8



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Ծրագիրներ

Վկայական Եւ Վկայագիր

ՀՀՀ ի ուսանողները, իւրաքանչիւր աւարտուած դասընթացքի համար կարելիութիւն ունին կուտակելու վարկանիշներ եւ ստանալ վկայական, վկայագիր եւ / կամ մագիստրոսի կոչում:

Վկայական

Վկայականը ուսանողին պահանջով կը շնորհուի: Վկայական կը ստանայ այն ուսանողը, ով աւարտած է բաժնի մը դասընթացքներէն մէկ մասը:

Վկայագիր

Վկայագիր ստանալու համար անհրաժեշտ է առնուազն 21 վարկանիշ հաւաքել: Ուսանողը եթէ մէկ բաժնի մը մէջ 21 հնարաւոր վարկանիշէն 18 –ը հաւաքէ, ապա հիմնական որակաւորում կը շնորհուի, իսկ եթէ ուրիշ բաժնի մը մէջ 21 հնարաւոր վարկանիշէն 12 –ը հաւաքէ, ապա երկրորդական որակաւորում կը շնորհուի:

Մագիստրոսի աստիճան

ՀՀՀն մագիստրոսական ծրագիր կ' իրականացնէ: Ան Լեզուաբանութեան ու Միջ- մշակութային Հաղորդակցութեան Մագիստրոսի կոչում կը շնորհէ: Ծրագիրը այս երկու բաժնիներուն համատեղ նախաձեռնութիւնն է: Ան երկու բաժնիներու փորձ կը նետարէ՝ ուսանողներուն կարելիութիւն տալով հայկական անցեալի եւ ներկայի լեզուաբանական, պատմական եւ մշակութային բնութագիրը միջառարկայական տեսանկիւնէն ուսումնասիրելու: Ծրագիրը հետեւեալ մասնագիտացումներով Մագիստրոսի կոչում կը պարգեւէ

- Հայոց Լեզու եւ Պատմութիւն
- Հայոց Լեզու եւ Արուեստի Պատմութիւն
- Հայոց Լեզու եւ Մշակոյթ

Այս համատեղ ծրագրի շնորհիւ ուսանողները կարելիութիւն ունին հայկական ժառանգութեան վերաբերեալ իրենց գիտելիքները զարգացնելու, ինչպէս նաեւ հայագիտական նիւթերուն վերաբերեալ հետազոտութիւններ կատարելու:

Ընդունելութիւն

Գիտական ցանկացած բնագաւառէն, Պսակաւոր Արուեստից վկայական ունեցող ուսանողները կարելիութիւն ունին իրենց կրթութիւնը ՀՀՀի մէջ շարունակելու եւ Մագիստրոսի կոչում ստանալու:

Մագիստրոսական ծրագրիին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւեալ փաստաթուղթերը.



- Համալսարանական վկայագիրի պատճենը
- Համալսարանական հետազոտություններու պատճենը
- Երկու երաշխաւորագիր նամակ: Անոնցմէ մէկը, ուսանողին ստրվելու կարողութիւններուն գիտակ անձի մը կողմէ պէտք է ըլլայ:
- 500 բառի սահմաններուն մէջ պէտք է ներկայացնեն հայագիտութեան, միջմշակոյթային հաղորդակցութեան նկատմամբ իրենց հետաքրքրութիւնը, համապատասխան փորձը (ակադեմիական, մասնագիտական կամ/եւ անձնական), եւ իրենց յետագայ մասնագիտական նպատակները իրականացման համար ՀՀՀի մէջ ուսանելու իրենց ակնկալիքները:

Ընդունելութեան հետ կապուած հարցերը պէտք է ուղարկել academicdirector@avc-agbu.org էլ. հասցեով:

Ընթացիկ Գրաւոր Աշխատանք Եւ Հետազոտութեան Պահանջներ

Ծրագիրը երկու մասէ բաղկացած է՝ ընթացիկ գրաւոր աշխատանք եւ հետազոտութիւն:

Մագիստրոսի կոչում ստանալու համար անհրաժեշտ է 120 վարկանիշ հաւաքել:

Գիտահետազոտական աշխատանք . Ա Խումբի եւ Բ Խումբի դասընթացքներ (72 վարկանիշ)

Այս վարկանիշներէն առնուազն 48-ը, այսինքն Ա Խումբի դասընթացքները, ուսանողներուն հիմնական մասնագիտական ոլորտէն պէտք է ըլլայ: Իսկ այն ուսանողները, որոնք երկրորդական մասնագիտական որակաւորման համար Պատմութիւն կամ Մշակոյթ նիւթը ընտրած են , պէտք է 24 վարկանիշ հաւաքեն (Բ Խումբի դասընթացքներ): Այդ վարկանիշները որպէս ուսանողի երկրորդական մասնագիտական որակաւորում, նշուած բաժինէն (առնուազն 18 վարկանիշ) եւ կամընտրական դասերէն պէտք է հաւաքեն: Այն ուսանողները, որոնք երկրորդական որակաւորման համար Արուեստի Պատմութիւն դասը ընտրած են, պէտք է Բ Խումբի դասընթացքներէն առնուազն 30 վարկանիշ հաւաքեն:

Դասընթացքներու ընտրութիւնը ուսանողի մասնագիտացումէն կախում ունի: Ուսումնական խորհրդատուն ուսանողին կ'օգնէ դասերը ընտրելու ատեն:

Հետազոտութիւն. Հ Խումբի դասընթացքները եւ գիտահետազոտական աշխատանք (48 վարկանիշ)

Ուսանողը 36 վարկանիշ պէտք է հաւաքէ աշխատանքային հետազոտութիւններ եւ դասախօսական աշխատանքներ կատարելու համար, ինչպէս նաեւ գիտահետազոտական աշխատանքին համար պահանջուող հետազոտական աշխատանքներէն: Մագիստրոսական գիտահետազոտական աշխատանքով ուսանողը 12 վարկանիշը կ'ապահովէ:

Բոլոր ուսանողները տարեկան առնուազն 160 ժամ պէտք է տրամադրեն իրենց դասախօսներուն եւ ղեկավարին հետ խորհրդակցութեան համար՝ տեսահաղորդակցութեան միջոցով կամ անձամբ ներկայանալով:

Վարկանիշներ/ Ուսումնական Ծրագիր Ըստ Մասնագիտացման

Հայոց Լեզու Եւ Պատմութիւն

Հայոց լեզուի դասընթացքներ (արեւելահայերէն կամ արեւմտահայերէն)- 48 վարկանիշ (Ա խումբ):

Հայոց Պատմութիւն (որպէս երկրորդական մասնագիտական որակաւորում՝ 18 վարկանիշ) եւ կամընտրական նիւթեր (6 վարկանիշ) - 24 վարկանիշ (Բ խումբ)

Հետազոտութիւն եւ գիտահետազոտական աշխատանք – 48 վարկանիշ (Հ խումբ)



Հայոց Լեզու Եւ Արուեստի Պատմութիւն

Հայոց լեզուի դասընթացքներ (արեւելահայերէն կամ արեւմտահայերէն)- 42 վարկանիշ (Ա խումբ) :
 Հայոց Մշակոյթ (12 վարկանիշ), Պատմութիւն (12 վարկանիշ) եւ կամընտրական նիւթներ (6 վարկանիշ): Պատմութեան դասընթացքները պէտք է առնչութիւն ունենան այն պատմական ժամանակաշրջանին, որը ուսանողը իբրեւ հիմնական մասնագիտացում ընտրել է: 30 վարկանիշ (Բ խումբ):
 Հետազոտութիւն եւ գիտահետազոտական աշխատանք – 48 վարկանիշ (Հ խումբ)

Հայոց Լեզու Եւ Մշակոյթ

Հայոց լեզուի դասընթացքներ (արեւելահայերէն կամ արեւմտահայերէն)- 42 վարկանիշ (Ա խումբ) :
 Հայկական Մշակոյթ (18 վարկանիշ) եւ կամընտրական նիւթներ (6 վարկանիշ) - 24 վարկանիշ (Բ խումբ):
 Հետազոտութիւն եւ գիտահետազոտական աշխատանք – 48 վարկանիշ (Հ խումբ)
 Մագիստրոսի կոչում ստանալու համար ուսանողները պէտք է առնուազն միջին <լաւ> (B) գնահատական ունենան գրաւոր աշխատանքի եւ հետազոտութեան համար:

Մագիստրոս: Խորհրդատուութիւն

Կրթական տնօրէնը նաեւ մագիստրոսական ծրագիրի խորհրդատուն է: Ան պատրաստ է ծրագիրին վերաբերեալ ցանկացած հարցումի պատասխանելու, ինչպէս նաեւ անհրաժեշտ խորհրդատուութիւն տրամադրելու: Ուսանողներուն ` ըստ իրենց հետաքրքրութեան համապատասխան , կը նշանակուի նաեւ խորհրդատու, նոյնիսկ մասնագէտ – դասախօսի առկայութեան պարագային: Խորհրդատուն ուսանողին մագիստրոսական աստիճանը ապահովող դասընթացքի ուսումնասիրութեանը պատասխանատու է եւ պահանջները իրականացնող անձն է :
 Դասընթացքները պէտք է խորհրդատուի հետ խորհրդակցելու ժամանակ ընտրեն: Իսկ ատենախօսութեան վերնագիրը պէտք է Հետրուիական Քննական Խորհուրդը հաստատէ:

Մագիստրոսական ատենախօսութիւն

Մագիստրոսական ատենախօսութիւնը համալսարանի երկու անդամներու ղեկավարութեամբ է որ կը գրուի:
 Մագիստրոսական աստիճան կը շնորհուի դասընթացքը եւ մագիստրոսական ատենախօսութիւնը յաջողութեամբ աւարտելու եւ պաշտպանելու ատեն, որը ի յայտ կը հանէ ուսանողին ինքնուրոյնութիւնը եւ իր հետազոտական հմտութիւնը:
 Ատենախօսութեան վերնագիրը պէտք է ուսանողին մասնագիտական ոլորտէն ըլլայ :
 Ատենախօսութիւնը 40 էջէն քիչ չըլլայ , եւ պէտք է գիտական աշխատանքներու չափանիշներուն եւ սկզբունքներուն համապատասխան ըլլայ:

Մագիստրոսական ծարագիրին դիմողներուն համար նախատեսուած կրթաթոշակ

Մագիստրոսական ծարագիրին դիմողները կրթաթոշակ կրնան ստանալ ՀՀՀի [Կրթաթոշակի քաղաքականութեան](#) համաձայն:

ՀՀՀ-ի քաղաքականութիւնը եւ ընթացակարգերը
 Այցելէք [ՀՀՀ կայք](#) էջ այս փաստաթղթին նոր տարբերակը տեսնելու
 4 | էջ 2



ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Գնահատականները կը նշանակուին տառերով եւ կը հաշուին ստորեւ գրուած թուային արժեքներու հիման վրայ:

Տառ	Տոկոս	Նիշ	Նկարագրութիւն	
Յաջող	A	95-100	4.0	Գերազանց – բարձր յառաջդիմութիւն, նիւթի բարձր ընկալում
	A-	90-94	3.7	
	B+	87-89	3.3	Լաւ- լաւ յառաջդիմութիւն, նիւթի ընկալում
	B	84-86	3.0	
	B-	80-83	2.7	
	C+	77-79	2.3	Լաւ- լաւ յառաջդիմութիւն, նիւթի ընկալում
	C	74-76	2.0	
C-	70-73	1.7		
Չախող	D	60-69	1.0	Յաջող– նիւթի նուազագոյն չափով ընկալում
	F	0-59	0.0	Չախող –նիւթի ընկալման անընդունելի ցած դրսեւորում

Մասնակից ուսանողները գնահատականներ կ'ստանան ակադեմական ուսումնական շրջանի ընթացքին: Եթէ մասնակից ուսանողը կը մասնակցի մէկէ աւելի դասընթացքներու եւ /կամ արձանագրուած է մէկէ աւելի ուսումնական շրջաններու համար, ապա արձանագրութեան պատասխանատուն կը պահպանէ ուսանողին միջին գնահատականը (GPA), այն հաշուելու համար պիտք է (առարկայի ընդհանուր նիշերը x վարկանիշային ժամերը) / (վարկանիշային ժամերու գումարը):

Ունկնդիր ուսանողները գնահատականներ չեն ստանար: Վերջիններս օնլայն ուսուցիչին կողմէ կ'ստանան ստուգուած կամ չստուգուած գնահատականը ներկայացուած նուազագոյն պահանջները կատարելու կամ չկատարելու պարագային: Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար այցելեցէք [Հաւատարմագրում](#) բաժինը:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՀՀՀի ակադեմիական կարգապահական քաղաքականութիւնը կը պահանջէ, որ բոլոր առաջադրանքները, հարցումները եւ քննութիւնները ըլլան ուսանողին անձնական աշխատանքը: Որեւէ ուրիշ պարագային այն կը որակուի որպէս ակադեմիական անկարգապահութիւն:

Խարեութիւն

- Արգիլուած է քննութեան ատեն հաղորդակցուիլ եւ իրարու փոխանցել քննութեան պատասխանները: Ժամային գօտիները տարբեր են, ուստի քննութեան օրերն ալ տարբեր են
- Արգիլուած է ուրիշի մը աշխատանքը առանց իր համաձայնութեան գործածել կամ ընդօրինակել
- Արգիլուած է ուսանողի մը տեղը քննութիւն յանձնել
- Արգիլուած է անձի մը հետ քննութիւն յանձնել
- Արգիլուած է ուրիշ ուսանողի մը աշխատանքը որպէս սեփական աշխատանք ներկայացնել
- Արգիլուած է խմբային աշխատանքի ընթացքին հովանաւորել անգործունեայ ուսանողին

Գրագողութիւն

- Գողնալ եւ գործածել ուրիշ ուսանողի մը միտքերը/բառերը
- Գործածել ուրիշի մը ստեղծագործական աշխատանքը առանց բնօրինակին յղում կատարելու

Անհրաժեշտ է խստօրէն պահպանել վերոյիշեալ ակադեմիական կարգապահական կանոնները: Իւրաքանչիւր դէպք կը ներկայացուի ՀՀՀի Ակադեմիական Խորհուրդի քննարկումին: Եթէ որոշուի, որ ուսանողը կարգապահական կանոնի խախտում մը կատարած է, ապա ան կը հեռացուի ՀՀՀէն եւ կը ստանայ XF ցուցիչը: Եթէ պարզուի, որ ուսանողը ակադեմիական կարգապահական կանոնի խախտման փորձ կատարած է, ապա ան կը զգուշացուի, իսկ նման վարքագիծի շարունակութեան պարագային կը հեռացուի ՀՀՀէն՝ ստանալով XF ցուցիչը: Եթէ ուսանողը դիտաւորեալ կամ գիտակցաբար օգնէ ուսանողի մը, խախտելով նշուած կարգապահական կանոններէն ռեւէ մէկը, ապա ան անձամբ կը խախտէ կարգը եւ այսպէս կը ստանայ համապատասխան նկատողութիւն: Կրնաք խորհրդակցիլ Ձեր օնլայն ուսուցիչին հետ, եթէ ռեւէ խախտում նկատէք կարգապահական կանոններուն մէջ:



ՈՒՇ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵԼՈՒ, ԴԱՍԸՆԹԱՑՔԷՆ ՀՐԱԺԱՐՈՒԵԼՈՒ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մահմանափակ ժամանակ կայ ՀՀՀի ուսումնական շրջանին արձանագրուելու եւ իր ուսանողը դառնալու համար: Ցանկություն ունեցողները կրնան մէկ կամ քանի մը դասընթացքներուն մասնակցելու յայտ ներկայացնել:

Ուշ Արձանագրություն

Ուշ կը համարուի այն արձանագրությունը, որը կ' ուղարկուի ուսումնական շրջանը սկսելէն 2 շաբաթ յետոյ: Այս յայտը կ' ընդունուի միայն այն պարագային, երբ այդ դասարանի ուսանողներուն թիւը կը ներէ նոր ուսանող ընդգրկել դասարանին մէջ: Բոլոր դիմումները պէտք է ուղարկուի Արձանագրութեան Գրասենեակ հետեւեալ հասցեով՝ registrar@avc-agbu.org: Եթէ արձանագրուիք, ապա պէտք է կատարէք նախորդ շաբթուայ բոլոր առաջադրանքները՝ հետեւելով օն-լայն ուսուցիչին կողմէ նշուած դասացուցակին:

Դասընթացքէն Հրաժարուիլ

Եթէ ուսանողը կը մասնակցի քանի մը դասընթացքներու, ապա այդ ժամանակ կրնայ հրաժարուիլ որեւէ մէկէն: Ան իրաւունք ունի դասընթացքէն հրաժարուելու Շաբաթ 0-ի եւ Շաբաթ 1-ի ժամանակ: Բոլոր դիմումները պէտք է ուղարկուի Արձանագրութեան Գրասենեակ հետեւեալ հասցեով registrar@avc-agbu.org:

Մինչեւ Շաբաթ 2-ի սկիզբը դասընթացքէն հրաժարուելու բոլոր յայտերը կ' ընդունուին եւ կը փոխհատուցուի ուսման վարձի 80%-ը:

Մասնակցութիւնը Ընդհատել

Մասնակցութեան ընդհատում կը համարուի եթէ ուսանողը

- Կը մասնակցի մէկէ աւելի դասընթացքներու ու կը ցանկանայ ընդհատել իր մասնակցութիւնը, երբ դասընթացքէն հրաժարուելու ժամկետը վերջացած է:
- Կը մասնակցի միայն մէկ դասընթացքի եւ կը փափաքի ընդհատել իր մասնակցութիւնը:

Ուսման Վճարի Փոխհատուցում

Ուսման վարձի փոխհատուցումը կը կատարուի հետեւեալ ձեւով.

Օրացոյց	Փոխհատուցում %
---------	----------------



Շաբաթ 0-ին մինչև Շաբաթ 1-ը	Կը փոխհատուցուի ուսման վարձի 80%-ը
Շաբաթ 2-ի ժամանակ	Կը փոխհատուցուի ուսման վարձի 50%-ը
Շաբաթ 3-էն վերջ	Չի փոխհատուցուի

Մասնակցութիւնը ընդհատելու մասին դիմումները պէտք է ուղարկուի Արձանագրութեան Գրասենեակ հետեւեալ հասցեով registrar@avc-agbu.org:

Ուսանողի Կարգավիճակի Փոփոխութիւն

Ուսանողը կրնայ փոխել իր ուսման կարգավիճակը՝ մասնակից ուսանողէն դառնալ ունկնդիի ուսանող կամ հակառակը: Ուսանողը իր կարգավիճակը փոխելու դիմումը նախքան Շաբաթ 3-ի սկսիլը պէտք է ներկայացնէ: Ուսման վարձը կը մնայ նոյնը այն ուսանողներուն համար, որոնք կ'ուզեն մասնակից ուսանողէն դառնալ ունկնդիի ուսանող, իսկ հակառակ փոփոխութեան պարագային ուսամն վարձը կը փոխուի:

Դիմեցէք Արձանագրութեան Գրասենեակ registrar@avc-agbu.org կարգավիճակի փոփոխութեան վերաբերեալ դիմումները յանձնելու համար:

Հեռացման Պատճառները

ՀՀՀի դասընթացքները ուսանողէն աշխոյժ մասնակցութիւն կը պահանջեն: Օնլայն ուսուցիչը իրաւունք ունի ուսանողին հեռացնել՝

- Անհրաժեշտ մասնակցութիւնը չապահովելու եւ պարտականութիւնը չկատարելու պարագային
- ՀՀՀի ակադեմիական կարգապահութեան օրէնքները չյարգելու պարագային

Ծանօթագրութիւն. Եթէ ուսանողը չի մասնակցիր դասընթացքներուն հիւանդութեան կամ այլ պատճառով մը ,ապա պէտք է այդ մասին անմիջապէս տեղեկացնէ իր օնլայն ուսուցիչին՝ խուսափելու հեռացուելէ:

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԻՏՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՀՀի ուսուցումը հիմնուած է օնլայն ուսուցման սկզբունքով եւ ոչ թէ ճարտարագիտութեան հիման վրայ: Ուստի կրթական եւ վարչական ռազմավարութիւնը ձեւաւորուած է՝ նկատի առնելով ուսանողներուն պահանջները, հարցումները, ինչպէս նաեւ անոնց ունեցած փորձը: Այս մօտեցման մէջ կայ երկու կարեւոր սկզբունքներ.

1. Ուսուցման բարձր որակ, որու չափորոշիչներն են.
 - ա. դասընթացքներու բովանդակութիւնը,
 - բ. թեքնօլօճիաներու եւ թեքնիքական հնարաւորութիւններու արդիւնաւէտ կիրառումը,
 - գ. մանկավարժական արդիւնաւէտութիւնը:



2. Կրթութեան բարձր որակ, որը հիմնաուծ է.

ա. ուսանողներուն բարձր գիտելիքներ տալով ուսումնական ծրագիրի եւ առարկաներու համաձայն,

բ. համապատասխանեցնել ծրագիրի նպատակները եւ ուսման արդիւնքները:

Այս նպատակները իրագործելու համար ՀՀՀի կրթութեան որակի եւ արդիւնաւետութեան գնահատման կեդրոնը առիթ կու տայ ուսանողներուն պատասխանելու միջանկեալ եւ աւարտական հարցաշարի մը, որուն արդիւնքները կը ներկայացուի ՀՀՀի նախագահին եւ նոյն ժամանակ կ' առաջարկուի կատարելագործման եւ զարգացման համար համապատասխան խորհուրդներ:

ՀՀՀի նախագահը այդ հարցումներուն արդիւնքները կու տայ ՀՀՀի Գործադիր եւ Ակադեմական խորհուրդներուն, կը հսկէ Կեդրոնի եւ նշուած երկու խորհուրդներու կողմէ ստացած առաջարկները իրականացնելու գործընթացը: Վերջինիս համար պատասխանատու է Կրթական Կեդրոնը (1-ին կէտի գ. ենթակէտ, 2-րդ կէտի ա եւ բ ենթակէտեր) եւ Զարգացման Կեդրոնը (1-ին կէտի ա եւ բ ենթակէտեր, 2-րդ կէտի ա ենթակէտ):